ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

..13. մարտի 2023թ. N.....82-Լ.....

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի N 16-Լ ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, «Հանրային ծառայության մասին» օրենքի 46.1-ին հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետը և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահ Վ. Գևորգյանի 2023 թվականի մարտի 6-ի N01/05/1128-2023 գրությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021 թվականի մարտի 10-ի «Ջրային կոմիտեի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 10-ի N 32-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 16-Լ հրամանով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) Հավելվածի 10-րդ կետի 33-րդ ենթակետի «վերջակետ» կետադրական նշանը փոխարինել «միջակետ» կետադրական նշանով,

2) Հավելվածի 10-րդ կետը լրացնել նոր 34-րդ ենթակետով հետևյալ խմբագրությամբ. «34) իրականացնում է հակակոռուպցիոն ոլորտի միջոցառումներ՝ պատասխանատու ստորաբաժանման միջոցով:»:

3/11/2023

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

ք. Երևան